ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ապրիլի 2013թ. N-------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2013 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.580-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Դավթաշեն, 1-ին թաղամաս, հ.33 շենք, հ.74 հասցեում գտնվող բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.01032013-01-1557 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Գևորգ Գևորգյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գևորգ Գևորգյանը դիմել է Երևանի քաղաքապետարան՝ Դավթաշեն 1-ին թաղամաս, հ.33-րդ շենք, հ.74 հասցեում գտնվող 23.2քմ մակերեսով ոչ բնակելի տարածքի գործառնական նշանակությունը որպես բնակելի փոխելու և մասնավորեցնելու խնդրանքով:

Դավթաշենի թաղապետի 25.12.1998թ հ.46 և Երևանի քաղաքապետի 03.05.1999թ. հ.544 որոշումներով Դավթաշենի 1-ին թաղամասի հ.33 շենքի առաջին հարկի /այժմյան հասցեն՝ Դավթաշեն 1-ին թաղամաս, հ.33-րդ շենք, հ.74/ 18.0քմ մակերեսով ոչ բնակելի տարածքը վարձակալության իրավունքով հատկացվել է Գևորգ Գևորգյանին:

Գևորգ Գևորգյանը հանդիսանում է արցախյան ազատամարտի մասնակից և մարտնչել է «Սասնա Ծռեր» ջոկատի կազմում: Նրա կողմից վճարվել են վերոհիշյալ տարածքի բոլոր կոմունալ և սպասարկման վճարները:

Երևանի քաղաքապետի 2013թ. փետրվարի 11-ի հ.539-Ա որոշմամբ՝ Դավթաշեն 1-ին թաղամաս, 33-րդ շենք, հ.74 հասցեում գտնվող ոչ բնակելի տարածքի գործառնական նշանակությունը փոփոխվել է և ընգգրկվել բնակելի ֆոնդում /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.01032013-01-1557 վկայական/:

Նկատի ունենալով, որ վերոհիշյալ հասցեում գտնվող ոչ բնակելի տարածքը Դավթաշենի թաղապետի 25.12.1998թ հ.46, իսկ հետագայում Երևանի քաղաքապետի 03.05.1999թ. հ.544 որոշումներով հատկացվել է Գևորգ Գևորգյանին, վերջինիս կողմից այն օգտագործվում է մինչ այժմ, նշված բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարելու համար անհրաժեշտություն է առաջացել կայացնելու Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշում, որով կլուծվի Գևորգ Գևորգյանի բնակարանային խնդիրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ առաջանում է Երևան քաղաքի ավագանու որոշման կատարումն ապահովելու մասին Երևանի քաղաքապետի որոշում ընդունելու անհրաժեշտություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ